ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

< 25 > օգոստոսի 2015թ.

N 153-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ N 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԵՆ ԳՈՒՐԳԵՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 226-րդ հոդվածի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և նկատի ունենալով «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի N3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների ոչ պատշաճ կատարումը՝

Կարգադրում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի N3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմեն Գուրգենի Պետրոսյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն»:

2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի N3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմեն Գուրգենի Պետրոսյանին՝ սեղմ ժամկետում վերացնել հայտնաբերված խախտումներն ու թերությունները և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ ներկայացնել տեղեկատվություն կատարված աշխատանքների մասին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ